

ւիրակը, ոմն Ռինկուպէր, ճիշդ այս առաքելութեամբ
Փետրսպուրկէն (այսօր Լենինկրաւ) կը մեկնի Գեր-
մանիա, ուր որոշ աշխատանքներ կատարելէ ետք,
գրութեամբ մը կ'առաջարկէ ռուս արքունիքին՝ ե-
թովպիա ղրկել 10 հոգինոց պատուիրակութիւն մը,
որուն «երկու հոգին գիտնան լեզուն, մէկը՝ սափրիչ
վարպետ-հանճարէ եւ միւսն ալ՝ խոհարար»:

Նուիրակը իր գրութեան կը կցէ նաեւ հետեւե-
տալ խորհրդաւոր տողերը.

«Անհրաժեշտ է նաեւ Հայեր առնել, որպէս զի
առեւտրական գործի պատրուակով կարելի ըլլայ պաշ-
պառուիլ քրեական կասկածներէ» (Պոսլեսնիա Նովոսի.
Փարիզ. 26 Դեկտ. 1935):

Արդ՝ որոշ է, որ Ռուսիա, Աւստրիա, Լեհաս-
տան, Վենետիկ եւ այլն, Թուրքիոյ հետ կռիւի մէջ էին
եւ կ'ուզէին, Թրքական բանակները կռնակէն հար-
ւածելու համար, Հապէշիստանն ալ ոտքի հանել՝ իրը
իրենց գինակիցը:

Միւս կողմէ գիտենք որ (տես վերը էջ 58—64)
նոյն այդ օրերուն Արեւմտեան Եւրոպոյի՝ յատկապէս
Ֆրանսայի մէջ, շարժում մը կար Թուրքիան նուա-
ճելու:

Հաւանական է, որ Ֆրանսայի մէջ ալ խորհ-
ւած ըլլայ Հապէշիստանի զինակցութեան վրայ եւ ո-
րովհետեւ ոեւէ կաթոլիկ կամ եւրոպացի հոն ղրկել
հնար չէր, Հայու մը դիմած են հաւանաբար:

Տեսնուեցաւ թէ Ժան Սոպիեցքի ի՞նչ ծրագիր-
ներ կը մշակէր եւ ի՞նչպէս Պարսկաստանը եւ Հայաս-
տանը իրար կ'անցրնէր: Տեսնուեցաւ նաեւ թէ Փա-
րիզի մէջ կային Հայեր, որոնք այս գործով շահ-
գրգռուած էին: Բաղէչցի Մուրատի պատմութիւնը
պերճախօս ապացոյց մըն էր, թէ Հայերը ո՛րքան